EASTERN PARTNERSHIP
CIVIL SOCIETY FORUM

Funded by
the European Union

Կոնտակտային անձ՝ Էմմա Անախասյան
Կազմակերպություն՝ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
Հեռախոսահամար՝ +374 10523604
Էլ.փոստի հասցե՝ officeawhhe@gmail.com
Կայքի հասցե՝ www.awhhe.am

Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիությունը Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում

(Մամուլի հաղորդագրություն)

Երկրի կամ տարածաշրջանի ջրային անվտանգությունը կարող է առերեսվել ամենատարբեր սպառնալիքների՝ կենսաբանական վտանգներ, կլիմայի փոփոխություն, բնական աղետներ, քաղաքական բռնություններ և այլն, սակայն, ջրի սակավությունը ջրի անվտանգության ամենից տարածված սպառնալիքն է: Աշխարհի բնակչության թվի աճն ավելացնում է խմելու ջրի և մշակաբույսերի աճեցման համար անհրաժեշտ ոռոգման ջրի պահանջարկը: Սա հանգեցնում է ջրի ճգնաժամի, այսինքն՝ չկա բավարար քանակով ջուր՝ այն բոլորի միջև բաշխելու համար: Աշխարհի շատ երկրներ բախվում են տնտեսական նպատակներով օգտագործվող ջրի սակավության խնդրին, քանի որ չունեն համապատասխան ենթակառուցվածքներ, տեխնոլոգիաներ և մարդկային ներուժ՝ առկա ջրային ռեսուրսները կառավարելու և բնակչության համար ջրի հասանելիություն ապահովելու համար:

Թեև Հայաստանը համեմատաբար հարուստ է ջրային պաշարներով և համարվում է ջրային ռեսուրսներով «չափավոր ապահովված» երկիր, այնուամենայնիվ, խմելու ջրամատակարարման հավասար հասանելիությունը դեռևս խնդիր է Հայաստանի հարյուրավոր գյուղական բնակավայրերի համար: Ինչպես հայտնի է, 2017 թ.-ի հունվարի 1-ից ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններն իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն: ՀՀ 1002 բնակավայրից շուրջ 579 գյուղական բնակավայր ապահովված չեն կենտրոնացված ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններով և ընդգրկված չեն ջրամատակարարման ընկերությունների սպասարկման տարածքում: Նշված

ECO-TIRAS

ICFER

բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է գյուղապետարանների կողմից:

Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության հիմնախնդրի քննարկմանն էր նվիրված 2023թ.-ի հոկտեմբերի 25-ին՝ Երևանի «Օպերա Սուիթ» հյուրանոցի «Մոցարտ» սրահում կայացած ««ՄԱԿ-ի ԵՏՀ-ի/ԱՀԿ-ի «Ջրի և առողջության մասին» Արձանագրության իրականացումը Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում»» խորագրով հանդիպումը: Միջոցառումը կազմակերպվել էր «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ի նախաձեռնությամբ՝ ««Նպաստել Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի Հանրապետությունների միջև անվտանգ խմելու ջրի հավասար հասանելիության վերաբերյալ փորձի և լավագույն գործելակերպի փոխանակմանը՝ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի/ԱՀԿ-ի «Ջրի և առողջության մասին» արձանագրության շրջանակում»» ծրագրի շրջանակում: Ծրագիրը համատեղ իրականացվում է ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ի, Մոլդովայի «Դնեստր գետի պահապաններ - Էկո-ՏԻՐԱՍ» և Վրաստանի «Բնապահպանական հետազոտությունների միջազգային կենտրոն» (IFCER) կազմակերպությունների կողմից:

Ներկաների թվում էին ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, ՔՀԿ-ների, ՁԼՄ-ների, Մոլդովայի և Վրաստանի վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով մասնակիցներին ողջունեցին ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ի նախագահ Ելենա Մանվելյանը և ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային համակարգող Հովսեփ Խուրշուդյանը՝ մաղթելով արդյունավետ աշխատանք:

Միջոցառման ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանում, Մոլդովայում և Վրաստանում ՄԱԿ-ի ԵՏՀ-ի/ԱՀԿ-ի «Ջրի և առողջության մասին» արձանագրության դրույթների իրականացման ոլորտում ձեռք բերված փորձին և լավագույն գործելակերպին: Խոսվեց նաև չսպասարկվող բնակավայրերում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման բարելավմանը խոչընդոտող հանգամանքների և դրանց հաղթահարման ուղիների մասին:

Ըստ «Էկո-ՏԻՐԱՍ»-ի ներկայացուցիչ Իլյա Տրոմիցկիի, հայտնաբերված առաջնահերթ խնդիրը ստորգետնյա աղբյուրներից և գյուղական ջրատարներից խմելու ջրի որակի անհամապատասխանության բարձր մակարդակն է, ինչը վտանգ է ներկայացնում առողջության համար: Նա նաև նշեց, որ դանդաղ առաջընթացը և քաղաքային ու

գյուղական բնակչության միջև անվտանգ կառավարվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հասանելիության մեծ անհամապատասխանությունն ամենակարևոր խնդիրներն են: Մոլդովայի Հանրապետությունում «Ջրի և առողջության մասին» արձանագրության իրականացման վերաբերյալ ազգային ծրագրի իրականացումը (2016-2025 թթ.) ազգային առաջնահերթություն է, որն ազդում է կյանքի որակի և անուղղակիորեն բնակչության առողջության վիճակի բարելավման վրա:

Բնապահպանական հետազոտությունների միջազգային կենտրոնի ներկայացուցիչ Գիա Աբրամիան իր ելույթում նշեց, որ Բորժոմիի Ախալդաբա, Կվիբիսի և Զանավի բնակավայրերում մարդիկ ապավինում են ջրհորերին՝ որպես խմելու ջրի այլընտրանքային աղբյուր: Ցավոք սրտի, որոշ հորեր տեղադրված չեն պատշաճ տեղերում և ոչ միշտ են կիրառվում սանիտարահիգիենիկ պահանջները: Իրենց հետազոտության ընթացքում նրանք պարզել են, որ 18 հորերից միայն 4 հորատերերն են ապահովել քլորացման գործընթացը: Նա ընդգծեց նաև, որ աղիքային հիվանդությունների տարածման ժամանակ կանխարգելիչ նկատառումներով խորհուրդ է տրվում օգտագործել Intesti Bacteriophage-ի օրինական ճանաչված բժշկական պատրաստուկն՝ այդ պատրաստուկն ավելացնելով հորերի մեջ:

Հանդիպման ավարտին մասնակիցները հանդես եկան առաջարկություններով, որոնք կարող են նպաստել խմելու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության խնդիրների լուծմանը:

«Ծրագիրն աջակցվում է ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի անդամներին Վերաֆինանսավորման ծրագրի (FSTP) միջոցով: Ծրագիրը նպատակ ունի ամրապնդել տարածաշրջանային հարթությունը և համագործակցությունը՝ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի Հանրապետություններում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման գործում տեղեկատվության հավաքագրման ու տարածման և փորձի փոխանակման միջոցով՝ 1992 թ.-ի «Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային» կից ՄԱԿ-ի ԵՏՀ-ի/ԱՀԿ-ի «Ջրի և առողջության մասին» արձանագրության շրջանակում»:

EASTERN PARTNERSHIP
CIVIL SOCIETY FORUM

Funded by
the European Union

ECO-TIRAS

ICFER